ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2024 թվականի N 20 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հունվարի 10-ի N 7-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 24-ին կայացած նիստի N 2 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1.Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 52 /հիսուներկու/ քաղաքացիների սոցիալական աջակցության նպատակով հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 2 820 000 /երկու միլիոն ութ հարյուր քսան հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

24.01.2024

X

2024թ. հունվարի 24
ք.Իջևան